

ՄԵԿՆՈՒՄ ՌԻՈ ԴԵ ԺԱՆԵՅՐՈ

Մայիսի 31-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի և ընկերակցությամբ Տ. Գրիգորիս եպիսկոպոսի, Տ. Տաթև ծայր. վարդապետ Ղարիբյանի և Ազգային Կենտրոնական Վարչության մի շարք անդամների, Սան Պաուլոյից մեկնում է Ռիո դե Ժանեյրո:

Ռիո դե Ժանեյրոն կարևոր նավահանգիստ է Ատլանտյան օվկիանոսի ափին: Պորտուգալիայի առաջին ճանապարհորդները ժամանել են այստեղ 1502 թ.: Քաղաքն ունի շուրջ երեք միլիոն բնակչություն: Այստեղ կան համալսարան, բժշկական և պոլիտեխնիկական ինստիտուտներ, հիվանդանոցներ:

Քաղաքում հայերի քանակը փոքր է՝ հպիվ հազար հոգի:

Ռիո դե Ժանեյրոյում Վեհափառ Հայրապետին ջերմորեն դիմավորում են «Արարատ լեռ» ընկերակցության անդամները, բարի գալուստ մաղթում, ապա առաջնորդում Նրան քաղաքի «Կեսար պարկ» հյուրանոցը:

Նույն օրը, ժամը 21-ին, «Արարատ լեռ» ընկերակցությունը «Կլուբ Լիբանո» ճաշասրահում կազմակերպում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթն ավարտվում է Հայոց Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԻՈ ԴԵ ԺԱՆԵՅՐՈՅԻ ՓՈԽ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՏ

Հունիսի 1-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.20-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ռիո դե Ժանեյրոյի փոխ-նահանգապետ Դարսի Ղիբերոյին և ջերմ զրույց ունենում նրա հետ:

Նույն օրը, ժամը 12-ին, Նորին Սրբությանը Ռիո դե Ժանեյրոյի իր բնակարանում ճաշկերույթով պատվում է «Արարատ լեռ» ընկերակցության անդամ Գրիգոր Սարգսյանը: